ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՈՎ ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌԴ

Համայն հայութեան Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Յարգարժան պրն. Վարդանով,

Ուրախութիւն է Հայրապետիս համար հաստատել, որ Ձեր ազգօգուտ եւ եկեղեցանուէր գործունէութիւնը Բարձրեալի ամենախնամ օրհնութեամբ արգասաւորուած է բարի արդիւնքներով: Դուք տարիներ Ձեր նուիրեալ ջանքերն էք բերում ի պայծառութիւն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու՝ մշտապէս սատար լինելով Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաքելութեանը:

Ազգասէր Ձեր ոգու անկեղծ մղումով Դուք ստանձնեցիք Կրասնոդարում հայկական դպրոց կառուցելու օգտաշատ աշխատանքը, որով անգնահատելի ծառայութիւն մատուցեցիք մեր ժողովրդի հաւատաւոր զաւակներին՝ սատար կանգնելով մեր լեզուի, մշակոյթի, գիր-գրականութեան պահպանման եւ մատաղ սերնդին հայրենի մեր արժէքների ու ազգային սրբութիւնների ոգով դաստիարակելու գովելի աշխատանքին:

Մեր ժողովրդին որդիաբար ծառայելու եւ հայորդեաց ազգային-եկեղեցական կեանքի շինութեանն ու պայծառութեանը Ձեր աւանդն առաւելաբար բերելու ազնիւ նուիրումով Դուք մեծագոյնս նուիրատուութեամբ մասնակիցը եղաք Մոսկուայի առաջնորդանիստ Եկեղեցու եւ եկեղեցական համալիրի կառուցման ապրուածահաճոյ գործին:

Բարձր գնահատանքի արժանացնելով Ձեր բազմարդիւն ծառայութիւնները մեր Սուրբ Եկեղեցուն եւ հաւատաւոր մեր ժողովրդին, սիրով ընդառաջ Տիրախնամ թեմի բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի ազնիւ խնդրանքին Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ, մեծարգոյ պրն. Վարդանով, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Աղօթում ենք, որ Բարին Աստուած պարգեւի Ձեզ քաջառողջութիւն, նոր եռանդով ու

ներշնչումներով լեցուն կեանքի երկար օրեր՝ շարունակելու Ձեր արդիւնաշատ ծառայութիւնը մեր ժողովրդին ու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն:

Թող Տիրոջ օրհնութիւնն ու առատ ողորմութիւնը անպակաս լինեն ընտանեկան Ձեր յարկից եւ մեր ժողովրդի կեանքից:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 12-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 784